ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Կանոնականացումը կամ սրբադասումը ժողովրդական բարեպաշտության մեջ կամ եկեղեցական իշխանության կողմից հիշատակումն ու մեծարումն է այն քրիստոնյաների, որոնք օժտված են եղել հետեւյալ հատկանիշներով՝ ջերմ հավատք, քրիստոնեավայել ու ասպվածահաճո վարք, մարդկային բարձր առաքինություններ, կատարել են բարենպատակ հրաշագործություններ, պատրաստակամ են եղել այլոց փրկության համար իրենց անձը սիրահոժար ընծայաբերելու եւ հանուն Քրիստոսի նահատակվելու:

Ինչպես մեզ հայտնի է, քրիստոնեական Եկեղեցին դեռեւս առաջին դարում բացառիկ հարգանք է դրսեւորել իրենց կյանքով ու մահվամբ Քրիստոսին վկայած անձանց նկատմամբ, եւ այդ հարգանքը տոնակատարության բնույթ է ունեցել[1]: Ժողովրդական այս բարեպաշտությունը շուտով եկեղեցական տեղական ժողովներով կանոնականացման է ենթարկվել: Իսկ ինչ վերաբերում է բուն կանոնականացմանը, պետք է ասել, որ առաջին դարերի քրիստոնյա Եկեղեցում այդ հարցի վերաբերյալ գործել է մի ընդհանուր ավանդություն[2]: Բոլոր հին եկեղեցիներին բնորոշ էր նախեւառաջ ժողովրդի ինքնաբուխ հարգանքը եւ պաշտամունքը հանուն Քրիստոսի նահատակների, մարտիրոսների, սրբակենցաղ անձանց հանդեպ, որն արտահայտվում էր նրանց անունները մահվանից հետո եկեղեցական օրացույցի մեջ առնվելով եւ Ս. Պատարագի ընթացքում հիշատակվելով: Ի տարբերություն Արեւմտյան եկեղեցու (Հռոմեական կաթոլիկ եկեղեցի), Արեւելյան եկեղեցում սրբադասման հիմնական, նախնական ձեւը գրեթե անփոփոխ մնաց: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, որպես Արեւելյան եկեղեցի, կանոնականացման մասնավոր գործընթաց չունի կամ ունեցել է, որը, սակայն, հետո կորսվել է: Ինչպես գիտենք, կանոնականացումը ենթադրում է կանոնի առկայություն, որը պիտի կարգավորի այդ գործընթացը: «Կանոնագիրք Հայոց»- ի Ա հատորում, «Կանոնք Գրիգոր Լուսաւորչի» կանոնախմբի հետեւյալ կանոնն ունի վերոնշյալ աղերսները՝ կանոն ԾԸ(58), «Չէ պարտ որ նշխարք մարտիրոսաց դնին, ի վերայ պատարագ մատուցանել»[3]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք չկա կանոնականացման վերաբերյալ, բայց կան ուղղակի հրահանգներ սրբերի նշխարների, ծիսադավանական եւ այլեւայլ արարողությունների մասին: Մեկ ուրիշ հետաքրքիր մանրամասնության ենք ականատես «Կանոնք Գանգրայի» կանոնախմբի ԻԲ կանոնում. «Եթէ ոք երթիցէ ի ժողովս մարտիւրոսաց՝ զգոյշ եւ պատրաստ լիցի սրբութեան, յորդորման, պաշտման, խոնարհութեան, աղաւթից, զի մեծ վարձս առցէ: Ապա եթէ ոք երթիցէ ամբարտաւանութեամբ, հպարտանաւք ի ցոյցս տեսողաց եւ գիտել զնմանիս իւր՝ նզովեալ լիցի»[4]: Այս կանոնում հստակ ցուցումներ են տալիս մարդուն, ինչպես մոտենալ «սրբություն» կոչված խորհախորհուրդ բառին: Կանոնականացման

1 Տե՛ս **Մեսրոպ արք. Աշճեան,** Սուրբերը եւ մենք, Նիւ Եօրք, 1993, էջ 59:
2 Տե՛ս անդ:
3 «Կանոնագիրք Հայոց», աշխատ. Վազգեն Հակոբյանի, Ա, Երեւան, 1964, էջ 244:
4 Անդ, էջ 189:

հարցում խիստ կարեւոր ենք համարում «Կանոնք Շահապիվանի» կանոնախմբի ՇՂԱ (Ը-ՁԷ) ԺԷ կանոնը. «Եթէ ոք նշխարս մարտիրոսի կամի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհի մի՛ դիցէ: Զյիշատակս մարտիրոսաց եւ զժողովս՝ առանց եպիսկոպոսին հրամանի մի՛ ոք իշխեսցէ առնել: Եւ եթէ ոք ի սուրբ տեղեացն մարտիրոսս բերցէ, առ եպիսկոպոսն բերցէ վկայութեամբք եւ թղթաւք եպիսկոպոսացն՝ ուստի եբերն. եւ իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ դիցէ՝ ուր արժան է դնել: Եթէ ոք սեղան կամիցի կանգնել տերունական խորհրդի, առանց եպիսկոպոսի, մի՛ ոք իշխեսցէ կանգնել: Բայց նշխարացն յանուն, զոր բերին, մեծապէս տաւնախմբեսցեն յամենայն տարւոջ յաւր բերելոյն. եւ պատուոյ եւ սրբութեան զգոյշ, զի մի՛ ի ցասումն միտեալ սուրբ ճգնաւորացն, որ վասն Քրիստոսին չարչաեցան, ցասումն աշխարհի հասցէ փոխանակ բարեխաւսութեան»[5]: Այս կանոնում մենք հստակ տեսնում ենք սրբադասման որոշակի ձեւ, ըստ որի առանց եպիսկոպոսի հրամանի կամ համաձայնության որեւէ մարտիրոսի նշխարներին կամ անվանը չի կարելի հարգանք եւ պաշտամունք մատուցել:

Սրբադասման համար որեւէ հստակ ձեւ, կանոն կամ կերպ չկա, կամ էլ դեռեւս չի հայտնաբերվել ուսումնասիրողների կողմից: Տարբեր ժամանակահատվածներում հանգամանքի բերումով, տարբեր ձեւով են սրբադասվել մեր Եկեղեցու սրբերը: Նրանց սրբադասումը իր հիմքում ունեցել է մի շարք մոտեցումներ: Մինչ այդ մոտեցումներին անդրադառնալը, հարկ ենք համարում նշել այն նախապայմանները, որոնց հիման վրա, ըստ մեզ, կատարվում էր կանոնականացումը: Դրանք են՝ նահատակությունը, որը բնորոշ է հիմնականում Ա-Գ դարերի քրիստոնեական Եկեղեցուն, առաքելական գործունեությունը, որը բնորոշ է քրիստոնեությանը՝ որպես պետական կրոն կայանալու ճանապարհին, ինչպես նաեւ ճգնական կենցաղավարությունն ու աստվածաբանական երկերի առկայությունը, որոնք բնորոշ են միջնադարին առհասարակ: Այդ բոլոր նախապայմաններին զուգահեռ պարտադիր էր, կարծես, տվյալ անձի անվան հետ կապված հրաշքների առկայությունը: Ահա այս նախապայմանների հիման վրա ձեւավորվում է սրբադասման երկու մոտեցում՝

1. Ժողովրդական ճանաչում, որն արտահայտվում է ժողովրդի ինքնաբուխ մեծարանքով, ուխտագնացությունների կազմակերպմամբ:

2. Եկեղեցական ճանաչում, որն իր հերթին բաժանվում էր երկու ճյուղի՝ եկեղեցական տեղական ճանաչումը եւ եկեղեցական կենտրոնական իշխանության կողմից ընդհանրական ճանաչումը: Որեւէ սրբի կանոնականացնելու համար կարող են գործել երկու մոտեցումներն էլ միասին կամ առանձին-առանձին: Ինչպես նշված է Զարեհ եպիսկոպոս Ազնաւուրեանի «Ինչպես կկատարուի սրբադասումը» հոդվածում. «Կարգ մը սուրբեր անհատական նախաձեռնութեամբ անցած են Յասմաւուրքներու եւ այդպէս տօնելի դարձած ամբողջ եկեղեցիին համար»[6]:

Որպեսզի այս մեր ուսումնասիրության ընթացքում որեւէ էական եզրահանգման հանգենք եւ ոչ թե տանք այն սուղ եւ սակավ փաստերը, որ առկա են այս խնդրի շուրջ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել այս կամ այն սրբի սրբադասման՝ մեր թեմային հետքքրքրող մանրամասները՝ ընդգծելով նաեւ այդ սրբի տեղական կամ համաքրիստոնեական սուրբ լինելու հանգամանքը: Շատ կարեւոր ենք համարում նախապես նկատել, որ վերոհիշյալ

5 Անդ, էջ 459-460:
6 **Մեսրոպ արք. Աշճեան**, անդ, էջ 62:

կանոնականացման մոտեցումները եւ նրանց բաժանումները հստակ չեն եւ շատ հաճախ մի սրբի անձի շուրջ մենք տեսնում ենք բոլոր վերոհիշյալ մոտեցումների միախառնումը: Ուստի հարկ չենք համարում ըստ մոտեցումների բաժանել սրբերին, եւ ապա ներկայացնել նրանց:

Այսպես, Սահակ Ա Պարթեւի (387-438թթ.) հիշատակը մեր Հայսմավուրքներում նշանակված է Նավասարդի Լ(30)-ին եւ սեպտեմբերի Թ(9)-ին. «...եւ թաղեցին մեծաւ պատուով բնական գիւղն իւր, որ կոչի Աշտիշատ եւ կարգեցին ի Նաւասարդի Լ, ամ յամէ տօնել զօր մեծ քահանայապետին Աստծոյ: Աղօթիւք սրբազան հայրապետացն մերոց. Քրիստոս Աստուած, ողորմեա»[7]:

Այս Հայսմավուրքում մենք ականատես ենք միաժամանակ եկեղեցական եւ ժողովրդական մոտեցումների միախառնմանը: Մեր խոսքերի հաստատումն է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» հետեւյալ հատվածը, ուր Սահակ Ա Պարթեւի սրբադասման կապակցությամբ գրված է հետեւյալը. «Որոց առեալ զտենչալի նշխարս սրբոյն, բազմութեամբ քահանայից եւ ազատաց տարան ի գաւառն Տարօնոյ, ի բնիկ գիւղն իւր սեպհական, յանուանեալն Աշտիշատ. եւ անդ կազմեալ զհանգստարանն սրբոյն՝ պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն զարժանի կայանից ճշմարտին: Ուր եւ շինեալ եկեղեցի մեծապայծառ եւ վկայարան սրբոց՝ զարդարեցին պատուական եւ մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանգնեցին ի տեղւոջս վանս բազմութեան պաշտօնէից, կարգեալ դարման անպակաս պտղոց ի հանգիստ առաւելեալ եղբայրութեանն. ժողովս տարեւորական աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղւոջն, որ ըստ ժամանակի բազմամբոխ ժողովրդօք կամաւոր յօժարութեամբ ազատք եւ քահանայք գաւառին, այլեւ կարի յոյժ ի հեռաւոր տեղեաց դիմեալք յօր կարգադրութեան նորա կատարեն: Որ եւ բազում օգնականութիւնս առողջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահէին ի նշխարաց սրբոյն եւ ուրախալից սրտիւ դառնային ի բնակութիւն իւրաքանչիւր»[8]:

Ներկայացնենք Ս. Սարգսին վերաբերող համապատասխան հատվածը, առկա նույն Հայսմավուրքում. «... Եւ նոյն ժամայն ծագեաց լոյս մեծ ի տեղւոջն յանմիկ. եւ ժողովուրդ քաղաքին ըՌուստիանու ելին զինուք ի պատերազմիլ ընդ նոսա եւ ոչ թողին հանել զնշխար սրբոյն Սարգսի, այլ միաբանեալ սիրով շինեցին ի վերայ մատուռ եւ գնացին»[9]: Այս հատվածում մենք ականատես ենք առավելապես ժողովրդական սրբադասման երեւույթին, երբ Եկեղեցուն մնում է ոչ այլ ինչ, եթե ոչ ընդունել եւ կանոնականացնել ժողովրդի մեջ սրբի համարում ունեցող մարդուն: Մասնավորապես Հայ Եկեղեցու ամենատոնելի սրբերից մեկը՝ Ս. Գրիգոր Ա Լուսավորիչը (301-325թթ.), նախ եւ առաջ սուրբ էր ժողովրդի գիտակցության մեջ՝ իր առաքելահաստատ գործունեության եւ ճգնակենցաղ կյանքի համար: Եւ ահա Հայսմավուրքի հետեւյալ տողերում՝ «...Ուստի եղեն բազում սքանչելի ի հիւանդս եւ յամ ցաւագնեալս: Եւ ի հռչակիլ անուան սրբոյն Գրիգորի ...»[10], ցույց է տրված ժողովրդի եւ Եկեղեցու անխախտ հավատքն առ այն, որ Գրիգոր Լուսավորիչը սուրբ է եւ հետեւաբար

7 «Գիրք որ կոչի Այսմաւուրք», ի տպարանի Գրիգոր դպրի Մարգարեցւոյ, Կ. Պոլիս, 1730, էջ ԿԱ:
8 **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 84:
9 «Գիրք որ կոչի Այսմաւուրք», էջ ՃԺԲ:
10 Անդ, էջ ՁՃՁԷ:

հատուկ կարգով հարկ չի եղել սրբադասել նրան: Այս տեսակ սրբադասումը բնորոշ էր բոլոր Արեւելյան եկեղեցիներին:

Այսպես, Վարդանանց նահատակների պարագային մենք գործ ունենք եւ՛ ժողովրդական, եւ՛ եկեղեցական սրբադասման հետ, ընդ որում՝ միաժամանակ: Նրանց սրբադասման հիմքում ընկած է «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մոտեցումը: Թեեւ այստեղ առկա է նաեւ հրաշքի երեւույթը. «Եւ այնու ճանաչէին. զի մարմինք պարսկացն սեւուցեալ էին եւ գարշահոտեալ, ուռուցեալ եւ այտուցեալ: Եւ քրիստոնէիցն իւրաքանչիւր գունովն անապականք էին սպիտակ եւ անուշահոտ՝ ի փառս Քրիստոսի Աստծոյ մերոյ»[11]:

Նման երեւույթի ենք հանդիպում նաեւ Ս. Մեսրոպ Մաշտոցի առնչությամբ, որ սրբացվել է հայկական գրերը ստեղծելու, իր բարեպաշտ կյանքի, շարականներ գրելու եւ այլ աստվածահաճո գործերի ու առաքինությունների համար. «...Փոխեցաւ ի կարգ կատարելոցն սրբոց յեկեղեցին անդրանկաց»[12]:

Ս. Գրիգոր Նարեկացու պարագային ի հայտ է գալիս սրբադասման մի նոր մոտեցում, որն ավելի բնորոշ էր այդ դարերի քրիստոնեական մոտեցմանը: Առաջին շարք էր մղվում նահատակվելու զուգընթաց ճգնակեցությունը եւ աստվածաբանական գրվածքների ու գիտելիքների առկայությունը՝ որպես նախապայման: Գրիգոր Նարեկացու կապակցությամբ բավ է հիշել «Մատեան Ողբերգութիւն» աղոթագիրքը, նրա անվան հետ կապված հրաշագործությունները, նրա տաղերը եւ այն սուրբ համբավը, որը նա ուներ դեռեւս կենդանության օրով թե՛ աշխարհականների, թե՛ հոգեւորականների շրջանում, ապա պատահական չի դիտվի նրա՝ տոնելի սուրբ լինելու հանգամանքը: Հայտնի է, որ նրան կասկածում էին աղանդավորներին, մասնավորապես թոնդրակյաններին հարելու մեջ: Այդ իսկ պատճառով, Կաթողիկոս Սարգիս Ա Սեւանցին նրա մոտ է ուղարկում պատվիրակներ՝ նրան ստուգելու. «...Եւ եկեալ առ սուրբն հրաւիրակքն զի տարցեն զնա: Իսկ սուրբն գիտացեալ զխորհուրդս նոցա կամեցաւ յանդիմանել զանմտութիւն նոցա: Ասա նախ, կերիցուք հաց եւ ապա գնասցուք. եւ եւ տապակել երկու աղաւնիս. եւ բերեալ եդ առաջի նոցա սեղան որպէսզի կերիցեն. եւ օրն այն ուրբաթ էր: Ընդ որ եւս առաւել զայթակղեցան հրաւիրակքն եւ ասեն, վարդապետ, ո՞չ է օրս ուրբաթ, եւ նա իբրեւ յանգէտս եղեալ ասաց թողութի՛ւն արարէք, եղբարք. ես ոչ գիտացի թէ պահս է օրս այս: Եւ նոյն ժամայս ընդ ասել սրբոյն՝ կենդանացան աղաւնիքն եւ թեւս առեալ թռեան առաջի ամենեցուն»[13]:

Գրիգոր Նարեկացու մասին բազում են ժողովրդական ավանդությունները: Շատ հետաքրքրական է հետեւյալը. «Ու կարի բազում նշանք լինին ի փառս Քրիստոսի եւ սրբոյն Գրիգորի: Յորոց ի բամբացն մին այս է, որ ի յետին ժամանակս քուրդ մի տիրէր Նարեկաց: Եւ հաւ մի այն քուրդն յիւր շինականն եւ ի թուխս դնել՝ եւ եհան զձագն. եւ շրջէր հաւն ձագերովն: Եւ երթեալ յահէ անձրեւին՝ եմուտ ձագերովն ի ներքոյ երկնաքարի միոյ, որ յեցեալ էր յորմն պատին. եւ յազդմանէ ջարին՝ անկաւ երկնաքարն ի վերայ յաւուն եւ ջարդեաց զհաւն ձագերովն: Իսկ այն կինն, որ զհաւն ի թուխս եղեալ էր, ահաբեկ եղեալ յահէ քրդոյն՝ յուսացաւ յԱստուած եւ աղօթս սրբոյն Գրիգորի եւ եղեալ զհաւն մեռեալ եւ հատեալ ձագերովն ի

11 «Գիրք որ կոչի Այսմաւուրք»,էջ ՁՃՁ:
12 Անդ, էջ ԳՃՁ:
13 «Գիրք որ կոչի Այսմաւուրք», էջ ԳՃՂԴ (394):

մաղ մի փոկէ. եւ առեալ հաւատով դարեալ եդ առ գերեզման սրբոյն Գրիգորի՝ եւ ինքն դարձաւ ի գործ իւր դառապանացն. եւ ի միտս աղաչէր զԱստուած եւ զսուրբն Գրիգոր եւ իբրեւ ժամ մի էանց ի վերայ, եւտես զհաւն զայր զրգրալով կենդանացեալ ձագերովն: Եւ հիացեալ փառս եւտ Աստծոյ եւ Զագյարոյց վարդապետին սրբոյն Գրիգորի: Աղօթիւք սրբազան վարդապետացն մերոց՝ դավանեալ ի նոցանէ Քրիստոս Աստուած՝ ողորմեա սպացողի»[14]:

Իր ասպվածաբանական աշխատություններով աչքի է ընկնում Ս. Գրիգոր Տաթեւացին. «Երանելոյն, եռամեծի սրբոյն Գրիգորի Տաթեւացոյն Անյաղթ փիլիսոփային, եւ աշակերտի Մեծի վարժապետին Հայոց, տիեզերալոյս վարդապետին Սրբոյն Ոհաննու Որոտնեցոյն»[15]: Այնքան մեծ է Տաթեւացու նկատմամբ մեր ժողովրդի եւ մատենագիրների հարգանքը, որ անգամ առասպելապատել են նրա ծննդյանը վերաբերող մանրամասները: Գրիգոր Տաթեւացու մասին խոսելիս հարկ է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ նա եւ՛ գրական, եւ՛ գործնական բնագավառում պայքարել է այլադավանների, մասնավորապես երկրնակների դեմ: «... Եւ ունէր զմիտս՝ ըստ Յոհաննու Աւետարանչի. թռուցեալ բարձրանայր երկինս եւ տեսանէր Հոգւով սրբով զհրամայեալսն նախամարգարէիցն. եւ զբան տէրունական սուրբ Աւետարանի: Եւ երանելի առաքելոցն: Եւ նախահարց սրբոց ասպուածաբանիցն: Եւ սա արար ըստ ինքեան բազում գրեանս ի մէջ եկեղեցւոյ: Այսինքն. Զմեծ Հարցմունքն: ԶԱրիստոտելի գրոց լուծմունսն: Զստորոգութեանցն: ԶՊերիարմենիասին: Եւ Առաքինութեանցն: Նաեւ զՊորփիւրին: ԶՊարապմանց լուծմունքն: ԶՍաղմոսի քաղուածուն: ԶԱռակաց քաղուածուն: Զերգ Երգոցին: Զիմաստութեանն: Եւ Զժողովողին: Զամբան հատորն: Եւ Զձմռան հատորն: ԶՅորայ լուծմունքն: ԶՅօհանու աւետարանի քաղուածուն: ԶԼուծմունք Արիստակիսի: Եւ Գէորգեայ գրչութեանն: ԶԱռօրս գրով լուծմունքին: Զփոքր հարցմունքն Գեորգեայ: ԶՔաղուածուն Մատթէոսի աւետարանի: ԶԵսայեայ քաղուածուն: ԶՈսկեփոքրիկ գիրքն: Եւ զգիրքն ծայրագոյն վարդապետական իշխանութիւն տալոյ: Եւ այլ բազում զանազան գրեանս արար, զորս ասէ ոչ եդաք»[16]:

Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրած Հայսմավուրքում ականատես ենք լինում սրբադասման մի նեղ մոտեցման՝ դավանաբանական պայքարի հենքի վրա: Այսպես, նույն Հովհան Որոտնեցու աշակերտներից Մաղաքիա Դրիմեցին, սրբադասվում է ոչ միայն այն պատճառով, որ իր ֆինանսական միջոցներով հովանավորում էր երկու վարդապետանոցների գործունեությունը, այլեւ մաքառում էր «ընդ երկբնակ հերձուածողաց», եւ անգամ թունավորվեց նրանց կողմից, որը, նահատակությունն է հանուն հավատքի[17]:

Առավել հետաքրքրական փաստեր է պարունակում տեր Իսրայելի խմագրած Հայսմավուրքը: Շատ հետաքրքրական են Վանական վարդապետի մասին տեղեկությունները, որոնք առկա են այդ Հայմավուրքում. «Գրեաց եւ բազում ինչ լուսաւոր վարդապետութեամբ, քանզի էր ծննդական մտօք, առաջ եւ զորաւոր բանիւք, որ աղբերաբար շնորհս բղխէր ի շրթանց իւրոց եւ լուսաւորէր զբազումս»[18]: Այս հատվածում մենք կրկին հանդիպում ենք ասպվածաբանական ձիրքերի գովերգմանը: Ապա խոսվում է նրա ճգնակենցաղ եւ բարե-

14 Անդ, էջ ԳՃՂԵ:
15 Անդ, էջ ԵՃԼԱ:
16 «Գիրք որ կոչի Այսմաւուրք», էջ ԵՃԼԳ:
17 Տես **Ա. Մաթեւոսյան, Ս. Մարարյան,** Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 102:
18 Տէր Իսրայէլ, «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, հ. Ա, էջ 56:

պաշտ կենսակերպի մասին. «Որ եւ եւ բազում արդիւնաւոր վաստակոց զոր վաստակեաց. եկեղեցւոյ եւ առաքինի գործոց՝ հասեալ ի բարւոք ծերութեան՝ փոխեցաւ առ Քրիստոս ի հասակի եօթանասուն ամաց»[19]:

Սրբադասման գործընթացում նկատելի է կանոնականացման եւս մի տարբերակ, երբ որեւէ կրոնական կամ աշխարհիկ գործիչ, հիմնականում բարձր դասի, կատարում է վճռորոշ եւ խոշոր դեր մասնավորապես եկեղեցաշինության, եկեղեցու նյութական, բարոյական հզորության եւ փառքի ավելացման գործում: Նման օրինակները բազմաթիվ են. օրինակ՝ Ներսես Մեծ (353-373) Կաթողիկոսը: Տեր Իսրայելի խմբագրած Հայսմավուրքում Ներսես Մեծի մասին գրված է հետեւյալը. «Առաջին՝ զի հրամայեաց վանորեայս շինել, եւ զկրօնաւորս ի լերինս բազմացոյց միաբանակեաց կենօք: Երկրորդ՝ զի հիւանդանոցս եւ հիւրանոցս շինեաց ի ճանապարհիս եւ յանբնակ տեղիս, եւ զհիւանդանոցս ի գեօղս եւ ի քաղաքս, եւ եւ գեօղս ի ծառայութեան: Երրորդ՝ զի ուրուկս գալութեամբ հալածէին հայք ի լերինս, խափանեաց զայսպիսի հրէական խստութիւնս՝ եւ եւ ընդունել զնոսա ի հիւանդանոցս: Չորրորդ՝ զի վասն ազահութեան հայրենեաց ընդ ընտանիս ամուսնանային իշխանքն զոր խափանեաց սուրբն: Հինգերորդ՝ զի անմխիթար լային ի վերայ մեռելոցն հեթանոսական սովորութեամբ. եւ խրատեալ դադարեցոյց: Զայսոսիկ եւ այլ կարգս բազումս յեկեղեցիս եւ ի քաղաքս ուղղեաց, եւ կացոյց վերակացու հիւանդաց զԽաղ զառաքինի սարկաւագն իւր. եւ էր տեսանել զհայք՝ նոր նորոգեալ նովաւ»[20]:

Այժմ կցանկանայինք մեր ուշադրությունը բեւեռել երկու սրբերի սրբադասման ձեւին եւ պատմությանը: Այդ սրբերն են՝ Վաչե Մամիկոնյան սպասպապետ եւ Վաչեանք ու Սմբատ Ա նահատակ (890-914 թթ.) թագավորը: Վաչե Մամիկոնյանը, որը սպարապետ էր Խոսրով Գ Կոտակ (330-338 թթ.) թագավորի օրոք, բազմիցս գլխավորեց հայկական բանակն ընդդեմ պարսիկների ու ճակատամարտերից մեկում զոհվեց՝ նրա հետ բազում իշխանազունք, ազատներ եւ ռամիկներ: Ահա նրանց հիշատակն է սահմանել տոնել ժամանակի Կաթողիկոս Վրթանես Ա Պարթեւը: Այդ մասին մեզ տեղեկություն է տալիս Փավստոս Բուզանդը. «Եւ եւ այսորիկ յաւել եւս լինել մարդ խստութեամբ պատերազմի ի մէջ պարսից եւ հայոց ընդ միմեանս. զի ժողովեցան, հասին, կուտեցին առնուլ զաշխարհն Հայաստան երկրին: Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախումբ բանակ նահարարակոյտ զօրացն: Եւ ելանէր տայր ընդ զօրսն պարսից պատերազմ եւ լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն եւ բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն: Անկանէր ի պատրեազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. եւ լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր Տեառն փրկութիւն տուեալ հայոց ի ձեռն նորա: ... Եւ եւ օրէնս ընդ աշխարհին մեծ քահանայապետին Վրթանէս՝ զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն եւ ապա զկնի նոցա զնոցայն. եւ մնացելոցն յանցելոցն գութ եւ խնամ կալցին: Զի սոքա, ասէ, ի նմանութիւն Յուդայ եւ

19 Տես անդ:
20 Անդ, էջ 87:

Մատաթեայ Մակաբէի անուան ի ճակատ պատերազմի եւ նմանութիւն եղբարց նոցա»[21]:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Վաչէյանք չեն սրբադասվել ինչպես Հայմավուրքներում առկա սրբերի մեծ մասը: Եկեղեցին չի եղել սոսկ փվյալ սրբերի անվանումների գրանցողը կամ ժողովրդական պաշտամունքի կանոնականացնողը: Նրանք սրբադասվել են Կաթողիկոսի կամքով, ապա սահմանվել է սրբադասման կանոն եւ հիշատակման օր: Այս միջադեպը մեզ հստակ պատկերացում է տալիս սրբադասման ձեւի մասին: Քննարկվող տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ սրբադասման կարգ եւ տոն սահմանելու իրավունքը պատկանել է Կաթողիկոսին, եւ այդ միտումը առկա է առ այսօր[22]: Նման մի դեպքի մենք ականատես ենք նաեւ Սմբատ Ա-ի դեպքում: Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Ուստի եւ այնտեղ Սմբատ սուրբ թագաւորին գերմարդկային տանջանքներով սպանեցին...»[23]: Նույնի մասին գրում է նաեւ հենց ինքը՝ Կաթողիկոս-պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին (898-929)՝ Սմբատ Ա-ին սրբադասողը. «Զի որ թաղեալն էր ընդ Քրիստոսի մկրտութեամբ ի մահ, պարտ էր նմա՝ զի ընդ նմին եւ խաչակցեսցի իսկ. եւ մի՛ մերժեսցի վկայօրէն համարձակութիւնն առ ի նմանէն, յորում եւ կայ մեծաց վարձաց հատուցումն»[24]: Նույն Սմբատ Ա-ի մասին տեր Իսրայելի Հայսմավուրքում գրված է հետեւյալը. «... Եւ լոյս ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյն նորա. եւ աւիչքն, որ կաթէին ի մարմնոյն՝ խառնեալ ընդ հողն լինէր բժիշկ ամենայն ցաւոց»[25]: Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «Գիրակոս պատմիչ կը վկայէ, թէ Յովհաննէս կաթողիկոս կարգեաց տօն սուրբ թագաւորին Սմբատայ...»[26]:

Այսպիսով, այս երկու սրբերի պարագային մենք ականատես ենք կաթողիկոսների միանձնյա կամքի դրսեւորմանը, որ մեր վերջին սրբերը՝ Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին, վավերականացվել են Հայսմավուրքներում Սիմեոն Երեւանցի (1763-1780) Կաթողիկոսի բարեփոխությունների հետեւանքով եւ կամքով, ուր նույնպես առկա է միանձնյա որոշում կայացնելու նախադեպը[27]: Նման երեւույթի մենք հանդիպում ենք նաեւ համաքրիստոնեական սրբերի պարագային, մասնավորապես Գրիգոր Վկայասեր (1066-1105) Կաթողիկոսի ժամանակ: Դրա մասին հիշատակում են ինքը՝ Գրիգոր Վկայասերը եւ Գիրակոսը իրենց հիշատակարաններում, որտեղ ասվում է, որ նրանք Տոնանամակում ոչ միայն մտցրել են սրբերի հիշատակի օրերը, այլ հունարենից հայերեն են թարգմանել սրբերի վարքերը եւ կազմել են նաեւ «Հայսմավուրք» ժողովածուն[28]:

Այսպիսով, սրբադասման համար անհրաժեշտ են հետեւյալ նախապայմանները՝ նահատակություն, ճգնակեցություն, ապրվածաբանական երկերի առկայություն, իրագործված հրաշքներ: Ինչ վերաբերում է սրբադասման ձեւին, ապա այստեղ առկա էր կա՛մ ժողովրդական ավանդության ուժով սրբադասումը, կա՛մ եկեղեցականը, մասնավորապես՝ Կաթողիկոսի կողմից սրբադասումը:

---

21 **Փաւստոս Բուզանդ,** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, էջ 42-46:

22 Տե՛ս **Լ. Ա. Սարգսյան, Գ. Ս. Սիմոնյան, Ռ. Հ. Վարդանյան,** Վարդանանց տոնի կանոնականացումը, Ապրվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան, 2007, էջ 20:

23 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 186:

24 **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երեւան, 1996, էջ 243:

25 **Տէր Իսրայէլ,** «Յայսմաւուրք», հ. Ա, էջ 207:

26 **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Պէյրութ, 1959, էջ 1038:

27 **Տ. Թորգոմ պատրիարք**, Սուրբք եւ փօնք Հայաստանեայց եկեղեցւոյ, Անթիլիաս, 1981, էջ 232:

28 Տե՛ս **Ռ. Հ. Վարդանյան,** Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 269: